ԵՄ – ՀԱՅԱՍՏԱՆ ԹՎԻՆԻՆԳ ԾՐԱԳԻՐ
Գործողություն 1.2

Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ

Երևան, 2015թ. դեկտեմբերի 7-10

DANMARKS STATISTIK

Պարտադիր արդյունքներ

Այս գործողության հետ կապված պարտադիր արդյունքը, ՊԱ1

Վիճակագրական տեղեկատվության տարածման բարելավված համակարգ

Չափանիշ

- Առկա վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ (2017թ. հուլիս)
- Մշակված տեղեկատվության տարածման համակարգի ռազմավարություն՝ ընդունված Վիճակագրության պետական խորհրդի կողմից (2017թ. հուլիս)
- Սպառողների բավարարվածության հետազոտության արդիականացված, փորձարկված և ՀՀ ԱՎԾ կայքում հրապարակված հարցաթերթ (2017թ. հուլիս)

1.2-ի նպատակը և սպասվող արդյունքը

Նպատակը

- Քննարկումներ, թե ինչպես աշխատել վիճակագրության սպառողների և նրանց տարբեր կարիքների հետ
- Տվյալների փոխանակման նպատակով Փոխըմբռնման Հուշագրերի մշակման քննարկում
- Սպառողների կանոնավոր վերապատրաստման կազմակերպման քննարկում
- Սպառողների և արտադրողների հետ համագործակցության պլանի մշակում
- Համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավում քննարկումներում

Սպասվող արդյունքը

- Պաշտոնական վիճակագրության սպառողների և արտադրողների հետ համագործակցության, վերապատարաստումների, կազմակերպական կարգավորման ռազմավարական պլանի և Ազգային վիճակագրական ծառայության տեսլականի վերաբերյալ առաջարկություններով առաքելության զեկույց
- Հաջորդ գործողության համար աշխատանքային ծրագիրը սահմանված է (1.3-ը ծրագրված է 2016թ. փետրավարի 29-ից մարտի 3-ը)

Եզրակացություններ. ընդհանուր պատկերացում

- Սպառողների հետ համագործակցություն. լրատվամիջոցներ
- Վիճակագրության համար վարչական տվյալներ տրամադրողների հետ համագործակցություն
- Ազգային վիճակագրական համակարգի համակարգում

Եզրակացություններ. համագործակցություն սպառողների հետ. լրատվամիջոցներ

- Իրականացվեց հաջող հանդիպում սպառողների հետ
- Սակայն միայն 5 լրատվամիջոցներ էին ներկա
- Լրատվամիջոցների կողմից հետագա զարգացման և տարածումը գերակա դարձնելու վերաբերյալ մեկնաբանությունները և խորհուրդները հաշվի կառնվեն ՀՀ ԱՎԾ կողմից
- Նույնականացվեցին արտաքին սպառողների վերապատրաստման կարիքները
  - Լրատվամիջոցների ներկայացուցիչները հետաքրքրություն արտահայտեցին, երբ հնչեցվեց հարց, թե արդյոք ՀՀ ԱՎԾ-ն պետք է սեմինարներ և վերապատրաստումներ կազմակերպի, որպեսզի նրանք ավելի լավ հասկանան վիճակագրությունը և կարողանան օգտագործել իրենց աշխատանքում

http://www.armstat.am
National Statistical Service of RA
RMENPRESS

Եզրակացություններ. Համագործակցություն վարչական տվյալները տրամադրողների հետ

- Վիճակագրական նպատակներով վարչական տվյալներ տրամադրողների հետ Նորվեգիայի վիճակագրության կողմից առաջարկված համագործակցության համաձայնագրի (ՓՀ) նմուշը համապարփակ և շատ օգտակար մոդել է
- Միգուցե դժվար կլինի տվյալները տրամադրողներին համոզել, որպեսզի նրանք կատարեն փաստաթղթի բոլոր դրույթները
- Սույն ՓՀ-ն թարգմանվում է հայերեն և կփորձարկվի է բնապահպանության նախարարության հետ

Եզրակացություններ. Ազգային վիճակագրական համակարգի համակարգում (ԱՎՀ)

- ԱՎՀ-ն կազմված է երկրում պաշտոնական վիճակագրության բոլոր արտադրողներից
- Ուրվագծվեցին ազգային վիճակագրական համակարգի համակարգման մարտահրավերները և հնարավորությունները հետագա ոգեշնչման համար
- Սրա վերաբերյալ պրեզենտացիոն նյութ ներկայացվեց բոլոր բաժինների պետերին

Առաջարկություններ

- ՀՀ ԱՎԾ-ն պետք է շարունակի ներգրավել սպառողներին՝ քննարկումներին հրավիրելով այլ կարևոր սպառողների ևս, ինչպիսիք են համալսարանները և նախարարությունները/Կենտրոնական բանկը
- Հաջորդ տարվա համար պատրաստել գերակայությունների պլան տարածման գործողությունների համար
- Տվյալները տրամադրողների հետ համաձայնագրի նմուշի փորձարկումից հետո այն պետք է հարմարեցնել՝ տվյալների այլ տրամադրողների հետ օգտագործելու համար
- Պատրաստել արտաքին վերապատրաստման դասընթացների պլան

Ճանապարհային քարտեզ և ժամանակացույց մինչև 2016թ. մարտին նախատեսված հաջորդ առաքելությունը

- Սպառողների հետ համագործակցությունը
  - Լրատվամիջոցներ. Նախապատրաստել և ուղարկել հաշվետվություն՝ ֆոկուս խմբերի հետ հանդիպումների արդյունքների մասին: Ներկայացնել ինչ եք պատրաստվում անել՝ նրանց կարիքները բավարարելու համար
  - Նախարարություններ. Նախապատրաստվել հաջորդ առաքելությանը իրականացվելիք ֆոկուս խմբի հանդիպմանը
  - Հետազոտություն. Նախապատրաստվել հաջորդ առաքելությանը իրականացվելիք ֆոկուս խմբի հանդիպմանը

Ճանապարհային քարտեզ և ժամանակացույց մինչև 2016թ. մարտին նախատեսված հաջորդ առաքելությունը

- Վիճակագրության համար վարչական տվյալներ տրամադրողների հետ համագործակցություն
  - Բնապահպանության նախարարության հետ ՓՀ նորվեգական նմուշի փորձարկում
  - Արդյունքների մասին հաշվետվություն
  - Նմուշի փոփոխությունների նախագիծ

Ճանապարհային քարտեզ և ժամանակացույց մինչև 2016թ. մարտին նախատեսված հաջորդ առաքելությունը

Ազգային վիճակագրական համակարգի համակարգում

- Ընտրել երեք ամենակարևոր արտադրողներին
- Նախագծել հնարավոր գործողությունների ցանկը